



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻ՝  
26.03.2015թ. ԹԻՎ 08/7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՐՅԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Արա Զոհրաբյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի և Մարտուն Փանոսյանի,

քննության առնելով Պալատի խորհրդի՝ 26.03.2015թ. թիվ 08/7-Ա որոշման (**այսուհետ նաև Որոշում**) մեջ փոփոխություն կատարելու մասին հարցը,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 15-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի 3-րդ կետի և 5-րդ մասի պահանջներով, միաձայն

## Ո Ր Ո Շ Ե Ց՝

1) Որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. **«8) Դավիթ Մելքոնյան, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցիչ, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ:»:**

2) Արձանագրել, որ Դավիթ Մելքոնյանի՝ որպես «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի կառավարման խորհրդի անդամի լիազորությունները սահմանվում են մինչև 2018 թվականի մարտի 26-ը ներառյալ:

3) Սահմանել, որ սույն որոշմամբ կատարված փոփոխությունն ուժի մեջ է մտնում **2016 թվականի ապրիլի 11-ից:**

Հայաստանի Հանրապետության  
փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

11 ապրիլի 2016թ.  
թիվ 10/3-Ա  
ք. Երևան